ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ Կորյուն Սամսոնյանի կողմից 2021 թվականի օգոստոսից 2022 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հանդիսանալով ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- նախապատրաստել եմ Տեսչական մարմնի ղեկավարի արտասահմանյան այցերի, օտարերկրյա պետությունների լիազոր մարմինների պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների, տեսակոնֆերանսների, քննարկումների բովանդակային մասը, կատարել արդյունքների վերլուծություն,
- իրականացրել եմ Տեսչական մարմնի ղեկավարի ելույթի խոսքի, զեկույցների, ուղերձների մշակման և քննարկվող նյութերի նախապատրաստման աշխատանքներ (և՛ հայերեն, և՛ օտար լեզուներով), մասնավորապես՝ սեպտեմբերի 7-ից 9-ը Լեհաստանի Կարպաչ քաղաքում տեղի ունեցած միջազգային տնտեսական 30-րդ հոբելյանական ֆորումի (Փոքր Դավոս)՝ «Սննդի համակարգերի վերակազմակերպում. ինչպես դադարեցնել սովը և պաշտպանել շրջակա միջավայրը» խորագրով Տեսչական մարմնի ղեկավարի զեկույցը, հոկտեմբերին Հայաստանում կայացած ԱՊՀ երկրների բույսերի կարանտինի համակարգող Խորհրդի 10-րդ նիստի Տեսչական մարմնի ղեկավարի ելույթի խոսքը, Հակամանրէային միջոցների նկատմամբ կայունության դեմ պայքարին նվիրված իրազեկման միջոցառումների

շաբաթվա մեկնարկի կապակցությամբ Տեսչական մարմնի ղեկավարի նոյեմբերյան ուղերձը, Եվրամիության «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EA-GATA) ծրագրի թիմի ղեկավար Պասկալ Բոկկերսի հետ դեկտեմբերին կայացած հանդիպման ելույթի խոսքը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) տեխնիկական կարգավորման հարցերով Կոլեգիայի անդամ (նախարար) Վիկտոր Նազարենկոյի հետ հանդիպմանը քննարկվելիք նյութերը, ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի կենդանիների առողջության և արտադրության ավագ տեսուչ Էրան Ռահիզմանի հետ առցանց եղանակով Հայաստանի Հանրապետությունում սպանդանոցների և անասնաշուկաների մանրէային և մակաբուծային հիվանդությունների վերահսկման ծրագրի քննարկման նյութերը և այլն,

- կազմել եմ Տեսչական մարմնի ղեկավարի, նրա տեղակալների արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվություններ,
- «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով և աշխատանքային էլեկտրոնային փոստով բաժնի պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ (արտաքին և ներքին շրջանառության),
- ուսումնասիրել եմ այլ երկրների լիազոր մարմինների կառուցվածքն ու գործառույթները, սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում նրանց փորձը, ինչը օգնել է աշխատանքի ճիշտ և արդյունավետ կազմակերպմանը,
- մասնակցել եմ առցանց դասընթացների, օրինակ՝ «Standardization of food and agricultural products for developing countries» խորագիրը կրող վերապատրաստման դասընթացին և այլն,
- բաժնի պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

Միջազգային համագործակցության բաժնի փորձագետ՝ Կորյուն Սամսոնյան

04 փետրվարի 2022թ.